ի սիրտս իւրեանց. եւ յամենայն կռուոյ, աւգնականութեամբ հզաւրին, ողջանդամք յաղթողք եւ անուանիք դառնային: *6* Եւ որք յաղագս ծերութեան եւ կամ ծանրամտութեան, ըստ մարմնոյ բնութեան, ուսանել ոչ զաւրէին՝ համայն յերկար աղաւթիւք եւ անվաստակ յոտն կալով[1] առաւել եւս կամաւոր յաւժարութեամբ անքուն եւ անհանգիստք լինէին. եւ էր տեսանել զամենեսեան որդիս լուսոյ եւ մանկունս արքայութեան:

7 Նոյնպէս եւ կանայք, որոց նահատակեալ մարտիրոսացան արքն, եւ այլոց կանանց[2], որոց էին ի կապանս արքն ի Հրեւ՝ բազում պարկեշտասէր առաքինութեամբ մի զմիով ելեւելս առնէին, *զաւր ամենայն մեռանելով ամենայն ախտից*[Բ]. ըստ բանի մարգարէին կենդանի մարտիրոսք էին. առ որս յաղթի բան՝ ասել որոշողութեամբ[3] զսաստիկ վարուցն նոցա ճգնութիւնս, որք անցուցին զբազում արամբք, եւ զբնական տկարութիւն մարմնոյ կանանց զաւրացուցեալ առաւել քան զարանց՝ քաջայաղթողք եղեն: *8* Կանայք փափուկք, դստերք նախարարացն եւ կանայք աւագաց, փոխանակ նաշիոյ կորեակ ուտէին, եւ փոխանակ պարզ գինւոյ ջուր չափով ըմպէին. փոխանակ կերպասեայ ոսկէհուռ [4]զգեստուցն խոշոր բրդեայս զգենուին, եւ փոխանակ բազմադիմի անկողնոցն փրիսայիւք ի վերայ երկրի գետնատարածք լինէին. եւ որք յառաջագոյն յամրանային ի քուն՝ նմանեալք վերնոցն անքունք եղեն: *9* Չաւծան իւղով, չյարմարեցին սանտրով զհեր գլխոյ իւրեանց. եւ որում անհնար է յաղթել կանանց, շատխաւսութեան եւ ստէպ ընդ քաւղով այսր անդր[5] հայեցողութեան զաչս յաւծելոյ՝[6] … ի ստէպ, եւ ցաւծուցին զլեզուս իւրեանց յաւելորդ խաւսից:

10 Յորոց խնդրուածս եւ ի վաստակս ի միասին արանց եւ կանանց ամենողորմն Աստուած հայեցեալ՝ յիշեաց զնահատակութիւն սրբոյն Վարդանայ եւ զամենայն միաբանելոցն ընդ նմա, եւ զբարեխաւսութիւն վկայելոց քահանայիցն Աստուծոյ, շնորհեալ պարգեւեաց դառնալ կապելոցն յաշխարհս Հայոց: *11* Որք եկեալ ի տունս իւրաքանչիւր յամի վեցերորդի թագաւորութեանն Պերոզի, եւ կեցեալք իւրաքանչիւր ոք[7] ըստ սահմանելոյ ի Տեառնէ՝ վախճանեալք թաղեցան ի դիրս հարց իւրեանց խաղաղութեամբ

---

1 *Ատ.* ոտն կալով

2 *ԲԳտ. ուղղագրել էին* յայլոցն կանանց

Բ Հմմտ. Սաղմ. ԽԳ 22:

3 *Զ.* որոշողութեամբք

4 *Զ.* սգեստուցն… զգենոյին

5 *Զ.* ընդ քողով այսր անտր

6 *ՏՏ.* զաչս ածելոյ.- *այստեղ ենթադրում ենք մի քանի բառի պակասորդ:*

7 *ՏՏ.* իւրաքանչիւրոց